1749 թուականներուն էր նաև Սահմանի Եուսուֆ՝ Պոլիսի Եուսուֆեանց նախահայրը։ Նոյն միջոցներն Ապրոյ Զէլէպին միջնորդելով Դրան մեծերուն՝ առաւ հայերուն համար Կրէտէի Քանտիա քաղաքին Յունաց Ս. Գէորգ Եկեղեցին, որ այնուհետև կոչեցաւ Ս. Կարապետ։

Առնցմէ տասը — տասնեւհինգ տարի ետքը կու գան արքունի ոսկերիչ և դրամապետ Տիւզ Մէքայէլ ամիրան, որուն ծագումն և վերջայքը վերն յիշեցինք անուանաբար և մահտեսի Տատ Աւաքել ամիրան 1, համանուն գերդաստաններուն նախահայրերը, մեծահաւատ ըսուած Մուրատ ամիրան և Պաղտասար ու Մուրատեանց Գասպար ամիրաները 2։

Առանք են, ըստ մեծի մասին, կարգ մը երկրորդական ամիրաներու և թարմատար աղաներու հետ՝ ակընցի նախնական ամիրաները, որոնց արտակարգ փայլերուն մեծ պատճառը կը թուի դարձեալ ինք՝ Նալեան Յակոբ պատրիարքը, իբր անոնց համշէրա՝ ակընցի՝ ըլլալով ինք ալ Զիմառայ գիւղէն։

Հինաւուրց այս ակընցիներուն յաջորդելով է՝ որ հետզհետէ կը ծլին ու կը մեծնան մեւս ակընցի թանձրախօսիկ և խորամանկիկ ամիրաներն ալ, որ երեւեցան ու ճոխացան մինչեւ 1840՝ իրենց երփնազանգուած ու առակի կարգ անցած վարպետորդիութիւններովը։

1760–1765ի միջոցը փայլած են մեծ Վէզիրին վաճառապետ՝ Պողոս Ղազար և Աւլան Ամիրաները, որ Վէզիրին մեռնելէն ետքը բանտարկուեցան և բարեխօսութեամբ ազատեցան. բայց Ղազար ամիրան ինկաւ, և իրենց երեքին միանգամայն յաջորդեցին Ճանոնենաւ Յարութիւն Սարգիս ումն և Սագայեան Մարտիրոս։

Նոյն 1750–65ի միջոցին է՝ որ կը չինուի հոյակապ

1. Կաղզուանցի Պողոս վարդապետ՝ գրած է ոտանաւոր գովեստ մը ի Մահտեսի Տատ. Աւաքել ամիրայ, տեղ ի տեսարակն «Զուռնայնութենէ կենցաղոյս» տպեալ ի Պոլիս 1805։

2. Ցիշատակարան ճաշոց գրոց, տպեալ երկրորդ անգամ ի Պոլիս 1793ին և հինգերորդ տպագրութիւն Նարեկի՝ 1774, ի յիշատակարանին։